Երրորդ հաղորդում

Կյանքի ցորենը, լավ սերմը, երկրի աղը, աշխարհի լույսը և մարդկանց որսողները

Գրվածքների ընթերցում. Մտթ 3:12, 13:38, 5:13-16, 4:16-20

I. Հավատացյալները խորհրդանշվում են կյանքի ցորենով, որը հավաքվելու է Տիրոջ շտեմարանում՝ Մտթ 3:11-12, 13:24-30, 38-42.

Ա. Հավատացյալները՝ որպես ցորեն, իրենց ներսում ունեն աստվածային կյանքը. կյանքն Աստված Ինքն է, ում մարդը վայելում է՝ Սղմ 36:7-9, Հվի 1:4, 10:10, 14:6, 6:63:

Բ. Եթե ուզում ենք, որ Քրիստոսի կյանքը մեր մեջ անարգել կերպով գործի, պետք է փորձառաբար ապրենք խաչի ջախջախելը՝ համաբովանդակ Հոգում եղող Քրիստոսի սպանող մահը, որպեսզի մեր ներսում եղող հետևյալ խոչընդոտները վերացվեն ու հեռացվեն.

1. Քրիստոնյա լինել նշանակում է հոգալ մեր մեջ եղող կենդանի Քրիստոսի համար և բացի Քրիստոսից՝ որևէ այլ բան որպես մեր նպատակը չընդունել. սրա խոչընդոտն այն է, որ մենք չգիտենք կյանքի արահետը և չենք ընդունում Քրիստոսին՝ որպես մեր կյանքի՝ Մտթ 7:13-14, Փլպ 3:8-14, Կղս 3:4, Հռմ 8:28-29:
2. Երկրորդ արգելքը կեղծավորությունն է. մարդու հոգևորությունը ոչ թե նրա արտաքին տեսքով է որոշվում, այլ այն բանով, թե ինչպես է նա հոգում Քրիստոսի համար՝ Մտթ 6:1-6, 15:7-8, Հվի 5:44, 12:42-43, հմմտ Հս 7:21:
3. Երրորդ արգելքը ապստամբությունն է. մենք կարող ենք լինել շատ գործուն ու նախաձեռնող՝ տարբեր բաներ անելիս, բայց դրա հետ մեկտեղ բանտարկել ու չհնազանդվել մեր ներսում եղող կենդանի Քրիստոսին՝ անտեսելով Նրան՝ Ղտց 14:9, 14-18, 11:1-2, 46-47, Հռմ 16:17, Ա Կրթ 15:33:
4. Չորրորդ արգելքը մեր բնական ընդունակություններն են. եթե այս բնական ընդունակությունները մեր մեջ մնան չջախջախված, արգելք կդառնան Քրիստոսի կյանքի համար՝ 2:14-15, 3:12-17, Հդ 19-21:

II. Հավատացյալները խորհրդանշվում են լավ սերմով՝ թագավորության որդիներով, որոնց Տերը սերմանում է, որպեսզի աճեն Նրա թագավորության մեջ՝ Մտթ 13:24, 38.

Ա. Սերմն Աստծու խոսքն է (խխ. 4, 19, Ղկս 8:11)՝ Քրիստոսն Ինքը (Ա Պտ 1:23), ով սերմանվել է մեր մեջ, որպեսզի մեզ դարձնի լավ սերմը՝ հարության որդիները (Մտթ 13:38, Ղկս 20:36-38):

Բ. Աստծու խոսքը՝ որպես ցորենի հատիկ, մեր մեջ է բաշխում Աստծուն՝ որպես կյանքի, մեզ սնելու համար. բացի դրանից՝ խոսքը՝ որպես կրակ, այրում է մեզ և շատ բաներ, որոնց ապավինում ենք, իսկ խոսքը՝ որպես

մուրճ, ջարդում է մեր «ես»-ը, մեր բնական կյանքը, մեր մսեղին, մեր տենչանքները և մեր պատկերացումները՝ Երմ 23:28-29:

Գ. Որպես լավ սերմ՝ մենք պետք է հետևենք Տիրոջը՝ հողի մեջ ընկնելով, որպեսզի մեռնենք ու շատ պտուղ բերենք հարության մեջ. մեռնել և խաչը փորձառաբար ապրել նշանակում է ուրանալ ու մերժել մեր շունչկյանքը՝ մեր բնական կյանքը, որպեսզի ապրենք աստվածային կյանքով՝ Հվի 12:23-26, 31-32:

Դ. Լավ սերմը սերմանելը նահատակություն է, որովհետև «ինչ դու սերմանում ես, չի կենդանարարվում, եթե չմեռնի» (Ա Կրթ 15:36). մենք կարող ենք նահատակներ լինել ֆիզիկապես, շնչաբանորեն կամ հոգևորապես (Բ Տմթ 4:6, Մտթ 16:25, Ա Կրթ 16:12, Բ Կրթ 2:12-14):

Ե. Քրիստոսի քնքուշ սերը նեղում է մեզ, որպեսզի ապրենք ու մեռնենք Նրա համար, և մեզ հանում Նրա նահատակներ է դարձնում՝ 5:14-15, Հռմ 8:35-37, 14:7-9, Հյտ 2:10, 12:11:

Զ. Հիսուսի մահվան մատնվելը մեր միջավայրում համագործակցում է ներքնակվող Հոգու հետ, որպեսզի սպանի մեր բնական մարդուն և ազատագրի աստվածային կյանքը՝ Հռմ 8:2, 13, Բ Կրթ 4:10-13, Երմ 48:11:

Է. Տիրոջն ուղղված մեր ողջ ծառայությունը պետք է սկիզբ առնի Աստծուց, ոչ թե մեզնից, այն բանին զուգընթաց, որ մենք թույլ ենք տալիս, որ Նրա մահը գործի մեր մեջ, որպեսզի Նրա հարության կյանքը մեր միջոցով ներդրվի ուրիշների մեջ՝ Բ Կրթ 4:12-13, 1:8-9, 4:5, 10:13.

1. Դավիթը սիրում էր Աստծուն, վախենում էր Աստծուց և համագործակցում Աստծու հետ՝ Աստծուն թույլ տալով աշխատել. թեև նա Աստծու տաճարը կառուցելու ընդունակություն ուներ, կանգ առավ, երբ Աստծու խոսքը եկավ իրեն՝ Բ Թգ 7:18, 25, 27, հմմտ Ղկս 1:38:
2. Դավթի կանգ առնելը տիեզերքում կրկնակի վկայություն հաստատեց. առաջին՝ տիեզերքում ողջ աշխատանքը պետք է Աստծուց բխի, ոչ թե մարդուց. երկրորդ՝ նշանակություն ունի միայն այն, թե ինչ է Աստված մարդու համար անում, ոչ թե այն, ինչ է մարդն անում Աստծու համար:
3. Տաճարը կառուցողը և տաճարի վայրն առաջացան այն բանի արդյունքում, որ Դավթին ներվեցին նրա մեղքերը, այն բանի, ինչ Աստված արեց Դավթի համար՝ Բ Թգ 12:24-25, 24:1-10, 18-25, Ա Մնց 21:18, Բ Մնց 3:1, Սղմ 51:
4. Մարգարետ Բարբեր քույրն ասել է. «Ով չի կարող դադարեցնել Աստծու համար աշխատելը, չի կարող Աստծու համար աշխատել»:

III. Հավատացյալները երկրի աղն են՝ նրանք, ովքեր սպանում ու վերացնում են երկրի՝ ապականության ու փտածության մանրէները՝ Մտթ 5:13, հմմտ Ղտց 2:13.

Ա. Ղովտի կինն աղե սյուն դարձավ և կորցրեց իր «աղելու» գործառույթը, որովհետև հապաղելով հետ նայեց Սոդոմին, ինչը ցույց է տալիս, որ նա

սիրում ու գնահատում էր այն չար աշխարհը, որն Աստված պատրաստվում էր ոչնչացնելու՝ Ծնդ 19:15, 24-26, Ղկս 17:32:

Բ. Եթե ուզում ենք Տիրոջը հետևելը մեր ողջ կյանքի գործը դարձնենք, պետք է դրան տանք այն ամենը, ինչ ունենք և ինչ կարող ենք անել. հակառակ դեպքում անհաջողություն կկրենք՝ դառնալով անհամ աղ, և փառքի շրջանից դուրս կշպրտվենք ամոթի ոլորտ՝ 14:31-35, հմմտ Հյտ 3:21, Հվի 16:33:

Գ. Մենք չպետք է հիասթափվենք կամ վհատվենք, այլ պետք է ամրապնդվենք ու ընդունակ դառնանք մեր կյանքով դրսևորելու աստվածային տնտեսությունը պատրաստված ու ավարտունացած Եռամեկ Աստծու՝ որպես համաբավարար շնորհքի միջոցով՝ Ա Կրթ 15:10, Բ Կրթ 12:9, Բ Տմթ 4:22, Կղս 4:6:

IV. Հավատացյալներն աշխարհի լույսն են՝ նրանք, ովքեր թույլ են տալիս, որ իրենց լույսը շողա մարդկանց առջև, որպեսզի ցրի աշխարհի խավարը՝ Մտթ 5:14-16, Եփս 5:8.

Ա. Լույսն Աստծու ներկայությունն է. քանի որ մենք ծնվել ենք Աստծուց, մենք այժմ Տիրոջ մեջ լույս ենք և պետք է որպես լույսի զավակներ քայլենք՝ Ա Հվի 1:5, Եփս 5:8-9:

Բ. Սեփական գաղափարով բռնվածությունից՝ ինքնախաբեությունից, փրկվելու համար մենք պետք է լույսի մեջ ապրենք, բացվենք Աստծու շողալու համար և մեր սեփական լույսը չառաջացնենք՝ Սղմ 36:8-9, 80:17-19, 139:23-24, Ա Հվի 1:5, 7, 9, Եսյ 2:5, 50:10-11.

1. Մարդու՝ սեփական գաղափարով բռնված լինելու ախտանիշը հետևյալն է. այն, ինչ նա մտածում և անում է, բացարձակապես սխալ է, այդուհանդերձ նա մտածում ու համարում է, թե ինքը բացարձակապես ճիշտ է՝ Մտթ 6:22-23, Եսյ 5:20:
2. Երբ մարդը մեղանչում է, պղծվում է. երբ մարդը մեղանչում է, այդուհանդերձ վստահ է, որ չի մեղանչել, և այդ բանն արդարացնում է, ապա նա խավարի մեջ է՝ Ա Հվի 1:8, 10:
3. Սեփական գաղափարով բռնվածությունը՝ ինքնախաբեությունը, առաջանում է այն պատճառով, որ մարդիկ խավարը լույսից շատ են սիրում (Հվի 3:19-20), հպարտանում են (Աբդ 3), չեն ընդունում ճշմարտության սերը (Բ Թսղ 2:10-11, Առկ 23:23) և չեն փնտրում փառքը, որը միակ Աստծուց է (Հվի 5:44):

Գ. Կյանքը բխում է լույսի շողալուց. լույսն Աստծու խոսքի մեջ է, և լույսը կյանքի ներքին զգացումն է՝ Բ Կրթ 4:6, Սղմ 119:105, 130, Եսյ 66:2, Հվի 8:12, Հռմ 8:6, 14:

Դ. «Մարմնի ճրագը քո աչքն է: Երբ աչքդ պարզ է, նաև ամբողջ մարմինդ է լուսավոր. բայց երբ այն չար է, նաև մարմինդ է խավար: Ուրեմն զգո՛ւյշ եղիր, որ քո միջի լույսը խավար չլինի: Եվ այսպես, եթե ամբողջ մարմինդ լուսավոր է և ոչ մի խավար մաս չունի, ապա ամբողջը լուսավոր

կլինի, ինչպես լինում է, երբ ճրագն է իր շողարձակումով քեզ լուսավորում»՝ Ղկս 11:34-36:

V. Հավատացյալները մարդկանց որսողներ են՝ Մտթ 4:16-20.

Ա. Մարդկանց որսողներ լինել նշանակում է մարդկանց դուրս բերել աշխարհից, որը խորհրդապատկերված է ծովով՝ դրա մահվան ջրերով հանդերձ, և նրանց բերել երկինքների թագավորություն՝ Ղկս 5:10:

Բ. Մարդկանց աշխարհից դուրս բերելու և նրանց երկինքների թագավորություն բերելու ճանապարհը ողջ բնակեցված երկրին թագավորության ավետարանը՝ Աստծու լիակատար փրկության ավետարանը, քարոզելն է՝ Մտթ 24:14, Ղկս 4:18-19, Եփս 3:8-9:

© 2026 Living Stream Ministry